



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-1-Ե-1  
2018թ.

**Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*նախագահությամբ՝*

*Ա. Սկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բարայանի, Գ. Բաղիրյանի,  
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,  
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,  
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Շ. Վարդանյանի*

2018 թվականի հունվարի 12-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի վարչական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Կարեն Բաղիշի Մաթևոսյանի թեկնածությանը:

2. Կարեն Բաղիշի Մաթևոսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի նախագահի լիազորությունները: